

ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃՂ

4. Ս. ԳԱՍՏՅԱՆ

Ոչ մի հասարակություն, անկասկած, չի կարող ծաղկել և լինել երջանիկ, եթե նրա անդամների զգալի մասը աղքատ է և դժբախտ:

Ադամ Սմիթ, 1776 թ.

Բնակչության կենսամակարդակի և տնտեսության զարգացման փոխկառավարչության մեխանիզմի բացահայտման ու ճանաչողության խորացումը խորհրդային տնտեսությունը ճգնաժամային վիճակից հանելու և զարգացման վերընթաց ուղի դուրս բերելու անհրաժեշտ նախադրյալներից է: Այն միաժամանակ կարևորագույն քաղաքատնտեսական խնդիր է, որի նպատակը միշտ էլ պետք է լինի օժանդակությունը սոցիալական խնդիրների լուծմանը:

Տնտեսական երևույթների կառավարման սկզբունքների և եղանակների ընտրությունը անսպասանորեն պետք է հիմնված լինի դրանց էության, բովանդակության, դրսևորման ձևերի, վերարտադրության գործընթացում ներանց ունեցած տեղի բացահայտման և բնորոշման վրա: Այլապես, այդ գործընթացները կառավարմանն ու ուղղություն տալուն նպատակադրված ջանքերը, ավելի հաճախ, և իրականում այդպես էլ կա, առաջ են բերում ոչ պակաս բարդության խնդիրներ: Որքան ավելի ենք խորանում վերակառուցման աշխատանքում, այնքան ավելի են բացահայտվում... չլուծված պրոբլեմներ»¹:

Նման իրավիճակի սլատճառներից մեկն էլ, անշուշտ, վերը նշվածն է: Վերակառուցման ներկա փուլին բնորոշ է նաև այն, որ զարգացման հակասությունների լուծմանը հավակնող որոշումների հիմնական մասը, անկասկած, կրելով անցյալի դրոշմը, ի վիճակի չէ այդ իսկ պատճառով անհրաժեշտ շափով կարգավորել և խթանել հետագա տնտեսական զարգացումը: «Էկոնոմիկան դեմքով դեպի մարդը ուղղելու», «պլանավորման սոցիալական ուղղղվածությունը ուժեղացնելու», «մարդկային գործոնի աճող դերը» հաշվի առնելու ձեռնարկվող փորձերին հակառակ՝ արտադրության ֆունկցիոնալ նպատակը դեռևս չի իրացվում խորհրդային հասարակության կողմից տնօրինվող բնական պոտենցիալին համապատասխան:

Անժխտելի է տնտեսական զարգացման և բնակչության բարեկեցության փոխկապվածությունը: Ա. Սմիթի ժամանակներից սկսած՝ տնտեսագիտության բնագավառում արդեն ձևավորվել էր այն միտքը, որ ազգաբնակչության բարեկեցությունը, լինելով արտադրության զարգացման հետևանք, միաժա-

¹ ԽՍՀՄ ԿԿ պլենումի նյութերը. 1987 թ. հունվար 27—28-ից, Եր., 1987, էջ 7:

մանակ հետագա տնտեսական աճի պայման է: Բարեկեցության և տնտեսական աճի միջև եղած կապը խորհրդային տնտեսագիտության ուսումնասիրությունների շրջանակից ըստ էության դուրս է մնացել, եթե նկատի չունենանք առանձին նկարագրական բնույթի հայտարարությունները և եզրակացությունները: Ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում մինչ այսօր էլ եղել է արտադրություն-բարեկեցություն կապի դրսևորումների վերլուծությունը, որը, անշուշտ, ավելի ակնառու է և հետևաբար՝ մատչելի: Այնինչ այդ փոխայլմանավորվածությունը իրականում առկա է և, մեր կարծիքով, իր որոշակի առաձգականությամբ (էլաստիկությամբ) հանդերձ, ունի նաև որոշակի սահմանային (կրիտիկական) մեծություն: Եթե այն խախտվում է, անկախ ուղղվածությունից, ապա բարեկեցությունը կորցնում է իր տնտեսական ֆունկցիաները, և ամբողջությամբ խաթարվում է արտադրության և սպառման ներքին կապը, այստեղից բխող բոլոր բացասական և ոչ միայն տնտեսական հետևանքներով: Հետևաբար, այդ փոխկապվածության ուսումնասիրությունը ժամանակակից քաղաքատնտեսության արմատական պրոբլեմներից մեկն է:

Մենք խնդիր ենք դրել, թեկուզև ուրվագիր տարբերակով, սահմանագծել պրոբլեմի շրջանակները և կառուցվածքը, սթափ գիտակցելով, որ մեր գիտափորձը վերաբերում է հասարակական գիտության նվազ ուսումնասիրված և դժվարամատչելի խնդիրներից մեկին:

Նախքան հարցի էության շարադրանքին անցնելը, անհրաժեշտ ենք համարում ճշգրտել այն հասկացությունները, դրանք բնութագրող տերմինները և ցուցանիշները, որոնք պետք է կիրառենք հետազոտության ժամանակ, ինչպես նաև մեր վերաբերմունքը նրանց նկատմամբ:

Բնակչության բարեկեցությունը բնութագրող կենսամակարդակ հասկացության բովանդակությունը որոշվում է նյութական և հոգևոր բարիքներով հասարակության անդամների ապահովվածությամբ, այդ բարիքների սպառման մակարդակով, ինչպես նաև բնակչության պահանջմունքների բավարարման աստիճանով: Կենսամակարդակի հիմնական ցուցանիշը բնակչության իրական եկամուտներն են: Այն հասարակության մեջ, որտեղ աշխատանքի արդյունքը դրսևորվում է արժեքի ձևով, բաշխումը իրականացվում է եկամտի ձևով: Հետևաբար, բնակչության սպառման մակարդակը՝ վերջին հաշվով բարեկեցությունը, կախված է ստացվող եկամուտների մեծությունից:

Բնակչության իրական եկամուտները որպես կենսամակարդակի հիմնական ցուցանիշ բնութագրում է այդ բազմաբարդ երևույթի մի կողմը միայն: Այն բնակչության կողմից անմիջականորեն յուրացվող (սպառվող և կուտակվող) բարիքների ամբողջ զանգվածի արժեքն է, այսինքն՝ իրական եկամուտները ազգային եկամտի մեջ բնակչության ունեցած մասն է: Պաշտոնապես իրական եկամուտների ցուցանիշը հաշվարկվում է մի եղանակով, համաձայն որի բնակչության դրամական եկամուտների ծավալից հանվում է ծառայությունների դիմաց կատարած վճարումների գումարը: Իրական եկամուտներում ներառվում են միայն վճարովի ծառայությունների նյութական ծախսումները՝ որպես անհատական կամ հասարակական սպառում: Ստացվում է, որ բնակչության իրական եկամուտները, այստեղից էլ բարեկեցությունը, կարելի է բարձրացնել ծառայությունների սպառման ծավալի կրճատման միջոցով՝ անհեթեթ մի բան: Բնակչության սպառման ընդհանուր մակարդակը բնորոշելու համար կենսամակարդակի ցուցանիշների համակարգում հաշվարկվում է նյութական բարիքների և ծառայությունների ծավալը: Այսպիսով, բնակչության սպառման ծավալը բնութագրող, թեև ոչ ամբողջությամբ, ցուցանիշը հաշվարկվում է: Բայց քանի որ բնակչության իրական եկամուտների

ցուցանիշը, որպես ազգային եկամտի մաս, «հավակնում» է կենսամակարդակի հիմնական ցուցանիշ լինելուն, պետք է արտացոլի, իր մեջ ներառի բրնակչության բոլոր եկամուտները: Ամբողջ խնդիրը հանգում է հետևյալին. մասնակցում է արդյո՞ք ազգային եկամտի արտադրությունը ծառայություն ստեղծող աշխատանքը, այսինքն՝ արտադրողակա՞ն է այն, թե՛ ոչ: Խորամուկս չլինելով հարցի պատմության մեջ, անհրաժեշտ ենք համարում նշել. նախ՝ մարդու աշխատանքային գործունեության այն ոլորտը, որը Մարքսի ապրած ժամանակահատվածում այնքան աննշան էր, որ կարող էր ամբողջապես անուշադրության մատնվել², ներկայումս ընդգրկում է զարգացած երկրների տնտեսությունների կեսից ավելին: Երկրորդ՝ դեռևս 19-րդ դարի կեսերին, Մարքսի տված աշխատանքի «դասական» սահմանման ժամանակակից ընդհանուր ընդունելություն և կիրառում ունեցող մեկնությունները արդեն չեն ընդգրկում մարդկային արտադրական գործունեության բոլոր կողմերը³: Այդ մեկնության հետևանքով մարդը շփմնավորված ձևով դուրս է մղվում բնությանից: Իսկ իրականում «...ապրում է բնությանմբ: Սա նշանակում է, որ բնությունը նրա մարմինն է...»⁴: Հետևաբար, պետք է նկատի ունենալ, որ եթե նյութաիրային արտադրության ոլորտում աշխատանքի գործընթացը ենթադրում է երեք պարզ հանգամանքի առկայություն (աշխատանքի առարկա, աշխատանքի միջոց և բուն աշխատանք), ապա ոչ նյութական արտադրության մեջ որպես աշխատանքի առարկա, այսինքն՝ բնության առարկա, հանդես է գալիս մարդը, նրա հոգևոր և ֆիզիկական ունակությունները: Արտադրության վերջնական արդյունքների տեսանկյունից այստեղ ևս աշխատանքի առարկան (մարդու ունակությունները) և աշխատանքի միջոցները հանդես են գալիս որպես արտադրության միջոցներ, իսկ աշխատանքը՝ որպես մարդու արտադրողական գործունեություն: Հասարակական սպառողական արժեք, իսկ տնտեսության ապրանքային համակարգի պայմաններում նաև արժեք ստեղծող աշխատանքը արտադրողական է:

Մեր կարծիքով, «պրոբլեմը» այստեղ այնքան ակնհայտ է, որ, ըստ էության, քաղաքատնտես հետազոտողները այլևս անելիք չունեն. այստեղ վերջին խոսքը, ինչպես որ դա ընդունված է մեզանում, քաղաքական ղեկավարությանն է: Այդ լուծումը, անկասկած, կպսակի բժշկի և անասնաբույժի աշխատանքների անմիջական տնտեսական արժողության վերաբերյալ բանավեճերի ավարտը. արդարացի լուծման դեպքում՝ բժշկին, հակառակ պայմաններում՝ որոշումը ընդունող սուբյեկտին:

Ինչ վերաբերում է վերը նշված եղանակով հաշվարկվող ԽՍՀՄ բնակչության իրական եկամուտների բացարձակ մեծությունը, այն մեզ հայտնի չէ, և մեր վերլուծության ընթացքում մենք կկիրառենք անվանական աշխատավարձի և այլ եկամուտների պաշտոնական ցուցանիշները, որոնց մեծության հիմանալը մեզ շնորհ է արված:

Բնականոն կենսագործող հասարակության մեջ արտադրության զարգա-

² К. Маркс. Капитал, т. 4; К. Маркс, Ф. Энгельс. Соч., 2-е изд., т. 26, ч. I, с. 421.

³ «Աշխատանքը կարելի է բնորոշել որպես ցանկացած մտավոր կամ ֆիզիկական ջանք, որը մասնակիորեն կամ ամբողջությամբ կիրառվում է ինչ-որ արդյունք ստանալու նպատակով, չհաշված կատարվող գործից անմիջականորեն ստացվող քավակաճությունը», — այս սահմանումը մեզ ավելի իրական է թվում: Ст'я А. Маршалл. Принципы политической экономии, т. I, М., 1983, էջ 124:

⁴ К. Маркс. Экономическо-философские рукописи 1844 года. К. Маркс, Ф. Энгельс. Соч., 2-е изд., т. 42, с. 92.

ցումը՝ ծավալային և որակական փոփոխությունները, իրականացվում է գերազանցապես արտադրության գործոնների կիրառման արդյունավետության բարձրացման՝ հասարակական աշխատանքի արտադրողական ուժի մեծացման ճանապարհով: Հետևաբար, հասարակության տնտեսական աճը հնարավոր է բնութագրել աշխատանքի արտադրողականության մակարդակի և նրա շարժի ցուցանիշների միջոցով:

Բնակչության եկամուտները և աշխատանքային ակտիվությունը: Մարդու տնտեսական ակտիվությունը վերջին հաշվով ուղղված է իր համապատասխան պահանջմունքների բավարարմանը: Վերջինս ուղղակիորեն կախված է ստացվող եկամուտների մեծությունից և կառուցվածքից: Իր հերթին, պահանջմունքների բավարարման աստիճանը որոշում է այդ ակտիվության նպատակահարմարությունը և մակարդակը: Եկամուտների հետ անմիջականորեն կապված և աշխատանքի արդյունավետության վրա ներգործող բազմաթիվ սոցիալական գործընթացներից առաջին հերթին առանձնանում են.

Ա. Իրական եկամուտների աճը, նորմալ պայմաններում, աշխատանքի արտադրողականության բարձրացման հիմնական շարժառիթն է: Ընդ որում, հստակ պետք է պատկերացնել, որ կախված եկամտի մեծությունից, միևնույնը չէ աշխատանքային ակտիվության վրա եկամտի մեծության կամ ստացման սկզբունքների ներգործության չափը: Ցածր եկամտի դեպքում՝ կենսական նվազագույն պահանջմունքների բավարարման շրջանակներում, աշխատանքային ակտիվության և ընդհանրապես մարդու վրա գերակշռող ազդեցություն ունի եկամտի մեծությունը: Պահանջմունքների բավարարման որոշակի աստիճանից սկսած էական դեր են սկսում խաղալ եկամտի ձեռք բերման սկզբունքները և եղանակները: Այսինքն, եկամտի և մարդու վարքագծի միջև կապը միանշանակ չէ եկամուտների տարբեր մեծությունների պայմաններում*:

Անպայմանորեն, հետազոտության իրական արդյունքների ստացման համար, պետք է հաշվի առնվի նաև հետևյալ ոչ պակաս նշանակություն ունեցող հանգամանքը: Երբ խոսքը անհատի մասին է (ամեն մի անհատ ինքնին բացառիկ է), ապա ամենայն հավանականությամբ գոյություն չունի այնպիսի սերտ կապ եկամուտների և արտադրության միջև, որպիսին առկա է, երբ մենք նկատի ունենք պրոֆեսիոնալ այս կամ այն խմբին պատկանող արտադրողին:

Բ. Եկամուտների աճը, ապրանքային արտադրության պայմաններում, հասարակության գլխավոր արտադրողական ուժի՝ մարդու որակական կատարելագործման հիմնական աղբյուրն է:

Արտադրության միջոցների սեփականության հասարակական ձևի պայմաններում եկամուտների ստացումը, հետևաբար և կենսամիջոցների բաշխումը սկզբունքորեն կարող է ունենալ առավելապես աշխատանքային հիմք: Այստեղից էլ պարզ է, որ նրա ձևերը և մեծությունը պետք է խթանեն հասարակական արտադրության մեջ մարդու ավելի արդյունավետ մասնակցությունը:

Բնակչության բարեկեցության և արտադրության զարգացման փոխկապվածության քանակական բնութագրումը, խոր տեսական վերլուծության բացակայության պայմաններում, մեր կարծիքով, հնարավոր է ստանալ բավարար ճշտությամբ էմպիրիկ ճանապարհով, տարբեր երկրների համապատասխան ցուցանիշների համեմատման և համադրման միջոցով: Սկզբունքորեն, այդպիսի ցուցանիշներ կարող են լինել անձնական սպառման ֆոնդի մասը

* Մեծություններ, որոնք ապահովում են պահանջմունքների բավարարումը նվազագույն միջին կամ նորմալ և բարձր աստիճաններում:

հասարակության ազգային արդյունքում, ինչպես նաև աշխատավարձի ֆոնդի մասը նոր ստեղծված արդյունքում (ազգային եկամտում): Այդ ցուցանիշների երկարատև դիտարկումները բացահայտում են դրանց հարաբերական կայունությունը մյուս մակրոհամամասնությունների նկատմամբ: Համաձայն բերված տվյալների⁵, տնտեսապես զարգացած երկրներում աշխատավարձի ֆոնդի բաժինը արդյունաբերության մեջ ստեղծված նոր արդյունքի մեջ վերջին 120 տարում տատանվել է 60—80-տոկոսների սահմաններում, այդ թրվում՝ ԱՄՆ-ում 1970 թ. այն եղել է 65 տոկոս, իսկ 1985 թ.⁶ 64 տոկոս: ԽՍՀՄ-ում այդ ցուցանիշը եղել է 1908 թ. (Ռուսաստան) 54,8 տոկոս և 58,19 տոկոս՝ 1928 թ. (գիտական և հրապարակախոսական գրականության մեջ 1928 թ. տնտեսական տեսակետից ԽՍՀՄ պատմության ամենաբարենպաստ տարին է համարվում): Դրանից հետո, հայտնի պատճառներով, այն իջել է և 1950 թ. հավասարվել 33,4 %, իսկ 1960 թ.⁶ 32,2 %, այնուհետև այն որոշ շափով աճել է և 1985 թ. կազմել 36,6 %: Մեր հաշվարկներով 1987 թ. այն դարձյալ նվազել է և հավասարվել 31,0 %⁶: Աշխատավարձի այսպիսի մակարդակը գրեթե բացառում է տնտեսական մեխանիզմի մեջ նրա, որպես աշխատանքի հիմնական շարժառիթի, օրգանական ներառման ամեն մի հնարավորություն: Իսկ զարգացած երկրներում հատկապես նրա մակարդակն ու դինամիկան են շատ բանով բացատրում մարդկանց վարքագիծը արտադրության մեջ:

Հայտնի է, որ ԽՍՀՄ-ը շատ բնագավառներում զիջում է զարգացած կապիտալիստական երկրներին, և այդ ճեղքվածքը վերջին քսանամյակում նրվազման միտումներ չի դրսևորում: Այստեղ, տեխնիկական գործոններին զուգընթաց, իր բացասական դերն ունի աշխատավարձի շարժարացված ցածր մակարդակը: Այն արդեն գրեթե չի իրականացնում իր տնտեսական ֆունկցիաները և խորհրդային հասարակությանը պատժում է նրանով, որ իր մակարդակին է իջեցնում նաև արտադրության մյուս գործոնների որակը: Դրավառ օրինակն է արևմտյան նորագույն տեխնիկայով հագեցված ձեռնարկությունների ցածր արդյունավետ աշխատանքը: Հասկանալի է, որ խորհրդային ուղղու ոչ փոխարկելիության պայմաններում աշխատավարձերի մակարդակների համեմատությունը հիմնականում անիմաստ է, թեև ուզ դա կատարվի ոչ թե «պաշտոնական», այլ «հատուկ կուրսին» համապատասխան: Համեմատության համար, ըստ մեզ, կիրառելի է համադրվող երկրների աշխատանքի արտադրողականության նկատմամբ աշխատավարձի մակարդակների հարաբերական մեծությունները: Մեթոդական առումով այդպիսի մոտեցման ճշմարտացիությունն է ապացուցում նաև զարգացած երկրների աշխատանքի արտադրողականության և աշխատավարձի մակարդակների համադրումը: Այս տեսակետից, աշխատավարձը ԽՍՀՄ-ում զիջում է ԱՄՆ-ի մակարդակը, ավելի քան 2 անգամ: Բնականաբար, ծագում է նաև բնակչության իրական եկամուտների երկրորդ հիմնական աղբյուրի՝ այսպես կոչված սպառման հասարակական ֆոնդերի ունեցած դերի հարցը: Բնակչության մեկ շնչի հաշվով այդ ֆոնդերի մակարդակը ԽՍՀՄ-ում մոտավորապես 5 անգամ զիջում է ԱՄՆ-ի համապատասխան ցուցանիշը (այստեղ հաշվի չի առնվում ներկայացվող ծառայությունների և արտոնությունների որակը):

Արտադրության և բաշխման փոխկախվածության, արտադրության վրա բաշխման ազդեցության արդյունավետության ընդհանրացնող ցուցանիշ կա-

⁵ ՏՎ՝ А. Зайченко. США—СССР: Личное потребление (некоторые сопоставления) США—ЭПИ, 1988, № 12, էջ 13:

⁶ Հաշվարկված է ըստ Нар. хоз. во СССР в 1987 г., М. Финансы и статистика 1988 г., էջ 14, 364, 390:

րող է լինել իրական եկամուտների և հասարակական աշխատանքի արտադրողականության անհի տեմպերի հարաբերակցությունը: Այն ցույց է տալիս աշխատանքի արտադրողականության անհի յուրաքանչյուր միավորի դիմաց ստացված եկամտի չափը: Դրանով իսկ բնորոշում է տվյալ տնտեսակարգի պայմաններում արտադրության վերջնական նպատակի իրացման աստիճանը, բնութագրում է տվյալ տնտեսակարգի «ռացիոնալության» մակարդակը: Այդ ցուցանիշի դինամիկան ԽՍՀՄ-ում ներկայացված է աղյուսակում:

Իրական եկամուտների և աշխատանքի արտադրողականության շարժը ու նրանց հարաբերությունը ԽՍՀՄ-ում 1971—1985 թթ. և մինչև 2000 թ.⁷:

Ժամանակահատվածներ ցուցանիշներ	1971—1975	1976—1980	1981—1985	1986—1990 սլլան	1971—1985	1986—2000 ճիմնական ուղղութ.
Բնակչության իրական եկամուտների աճը 1 շնչի հաշվով %	124	118	111,0	114	162	180—180
Հասարակական աշխատանքի արտադրողականության աճը %	125,0	117,0	116,5	123	170	230—250
Իրական եկամուտների աճը աշխատանքի արտադրողականության 1 %-ի հաշվով	0,99	1,01	0,95	0,93	0,95	0,7—0,72

Ակնհայտ է, որ առկա է մի իրավիճակ, երբ «արտադրություն՝ սպառման համար» կամ «արտադրություն՝ արտադրության համար» տարբերակներից նախընտրությունը կամա թե ակամա տրվում է երկրորդին, բացառությամբ 1976—1980 թթ.: Սրա պատճառները առանձին քննության առարկա են: Այստեղ անհրաժեշտ ենք համարում նշել, որ այսպես կոչված «աշխատավարձի անհի նկատմամբ աշխատանքի արտադրողականության առավել անհի օրենք» գոյություն ունենալ չի կարող (ի տարբերություն այդպիսի օրենքի հայտնագործման սոցիալական պատվերի), քանի որ այդ հարաբերակցությունը ցույց է տալիս ոչ այլ ինչ, քան թե ստեղծված նոր արդյունքի որ մասն է անմիջականորեն գնում անհատական սպառմանը, իսկ որ մասն է պետականացվում (հանրայնացվում):

Նույնիսկ աղյուսակի ոչ ծավալուն վերլուծությունը ցույց է տալիս այն բացասական միտումները, որոնք շատ բանով պայմանավորված են ազգային եկամտում աշխատավարձի և այլ եկամուտների փոքր բաժնով, ամենայն հավանականությամբ «կզարգանան» նոր եռանդով, քանի որ ժողտնտեսության զարգացման հիմնական ուղղություններով նախատեսված է աշխատանքի արտադրողականության էլ ավելի բարձր աճ իրական եկամուտների նկատմամբ: Անկասկած է, որ այդպիսի քաղաքականության ընտրությունը պայմանավորված է նաև այն փաստի «կաղապարող» գիտակցմամբ, որ բնակչությունը տնօրինում է զգալի մեծության հասնող թղթադրամի «ավելցուկային» զանգված և որ տնտեսությունը առողջացնելու միջոցներից մեկն էլ դրանք տնտեսական շրջանառության մեջ ներթաշնչելն է: Սակայն, բարի նպատակները դեռևս երբեք ուղղություն չեն տվել տնտեսական գործընթացներին, քանի որ նրանց հիմքում ընկած են օբյեկտիվ օրենքները, և միայն այդ օրենքների

⁷ Հաշվարկված է ըստ *Вар. 102-30 СССР* » 1987 г., էջ 33:

կործողութեան շրջանակներում իրականացվող գործունեությունը կարող է տալ ցանկալի արդյունքներ:

Այսպիսով, արձանագրելով ստեղծված իրավիճակը, կարելի է բավարարվել Մարքսի հետևյալ մտքով՝ ասված 1844 թ. «Ինչպես որ հասարակությունը ստեղծում է մարդուն որպես մարդու, այնպես էլ այն ստեղծում է հասարակությունը»⁸: Սակայն մեր հիմնական նպատակը ստեղծված իրավիճակի նկարագրությունը չէ, առանց դրա էլ այն պարզ է, այլ ճգնաժամային վիճակից դուրս գալու միջոցների և ուղիների բացահայտումը:

Առաջին.— պետք է սկզբունքորեն կողմնորոշվել, որ եկամուտների մակարդակի և արտադրության զարգացման միջև գոյություն ունի անմիջական կապ, որն անկասկած պետք է վերականգնվի և անպայմանորեն պահպանվի:

Երկրորդ.— սոցիալական արդարությունը բաշխման հարաբերություններում, որը կարող է օբյեկտիվ տնտեսական օրենքների գործողության արտացոլումը լինել միայն, պահանջում է բնակչության եկամուտների կտրուկ բարձրացում: Առանց այն էլ սահմանափակ առաջարկի պայմաններում լրացուցիչ թղթադրամով ողողումը անհեռանկարային և նույնիսկ կործանարար կարող է լինել: Բայց պետք է նկատի ունենալ, որ եկամուտների աճը խթանելով աշխատանքային ակտիվությունը՝ նոր աշխատանք կներգրավի հասարակական արտադրության մեջ: Այդպիսի շարժման անընդհատությունը աստիճանաբար արժեզրկված և ապրանքային զանգվածով չապահովված թղթադրամները կըվերածի փողի:

Երրորդ.— նոր աշխատանքի (կամ արտադրողականության աճի) ներգրավման պայմանը տնտեսական ազատությունն է: Արտադրողների և սպառողների տնտեսական ազատությունը կարող է վերաստեղծվել արտադրության միջոցների և աշխատուժի նկատմամբ սեփականության տարբեր ձևերի գոյության փաստի ընդունման և նրանցից յուրաքանչյուրի համար զարգացման և մրցակցության միևնույն իրավատնտեսական պայմանների ստեղծման միջոցով:

Г. С. ГАЛСТЯН—Жизненный уровень населения и экономический рост.—На основе исследования материала делается попытка выяснить количественную сторону связи уровня доходов и трудовой активности населения. Выдвигается мнение, что одной из причин низкого уровня производительности в СССР является необоснованно низкий уровень заработной платы, вследствие чего последняя утерьяла свою экономическую функцию. Автор делает предложения, осуществление которых поможет выходу из кризисного состояния.

⁸ К. Маркс, Ф. Энгельс. Соч., 2-е изд. т. 42, с. 118: